

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2020թ. թիվ 2011287130 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25 >> 08 2020թ. 7-13- 10047

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Նելսոն Սահակյանի ՄԴ/103696-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Ազատամարտիկների փողոցի 76-րդ շենքի 4-րդ բնակարանի բնակիչ Նելսոն Սահակյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011287130 որոշումը՝ նշելով, որ կանգառը կատարել է ուղևորներ իջնելու նպատակով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **երթևեկելի մաս** է համարվում ճանապարհի տարրը՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է խաչմերուկներում, երթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց):

Այսպիսով, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011287130 որոշումով իրավախախտման PIN անհատական ծածկագրերի տակ զետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ են դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող <<OPEL>> մակնիշի 35TX884 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 15.06.2020թ. ժամը 13:37:16-րդ վայրկյանից 13:38:33-րդ վայրկյանը 77 վայրկյան տևողությամբ կանգառ է կատարել Երևան քաղաքի Թամանյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ երթևեկելի մասերի հատման վրա, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-

րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (**միայն կանգառ կատարելու մասով**) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը**, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար: Տեսանյութը փաստում է նաև դիմումատուի ավտոմոբիլը խոչընդոտ է հանդիսանում երթևեկության մյուս մասնակիցներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2020թ. թիվ 2011287130 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Նելսոն Սահակյանին:

Կատարող՝ Է.Հովհաննիսյան
Հեռ. 011544783



Ն.Սարգսյան